ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 31.07.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/169

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն

Մասնակից՝ «Արքասիմ» ՍՊԸ

Մասնակցությամբ՝

«Արքասիմ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ՝ Վ. Սիմոնյանի, Մ. Սիմոնյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցում, կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10369-2020 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 07.07.2020թ.-ի թիվ 04.1/31.2/17178-20 գրության հիման վրա, 10.07.2020թ.-ին «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 10.07.2020թ.-ին

Բողոքներ քննող անձի 13.07.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/169 համարի ծածկագիրը և նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում:

22.07.2020թ.-ին և 31.07.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 22.07.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 31.07.2020թ.-ին:

2. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը 07.07.2020թ.-ի թիվ 04.1/31.2/17178-20 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Տեղեկացնում եմ Ձեզ, որ նախարարության կողմից 2020 թվականի հունիսի 15-ին գնանշման հարցման ընթացակարգով «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/86» ծածկագրով կազմակերպված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններին հայտ է ներկայացրել «ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ-ն: Հաշվի առնելով, որ մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը կազմված չեն հրավերի պահանջներին համապատասխան՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գնահատման գործընթացը կասեցվել է և 2020 թվականի հունիսի 25-ին առաջարկվել է «ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ-ին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

արձանագրված անհամապատասխանությունները, սակայն դրանք ամբողջությամբ չեն շտկվել և վերջինիս հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով մերժվել է:

Ելնելով վերոգրյալից, կից ներկայացնում եմ «ԱՐՔԱ ՍԻՄ» ՍՊԸ-ի վերաբերյալ տվյալները, վերջինիս հայտը, https://armeps.am/ համակարգի միջոցով ուղարկված շտկման մասին ծանուցումը, գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստից ուղարկված շտկման մասին ծանուցումը, մասնակցի կողմից ներկայացված շտկումը, գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությունը և ձեռք բերվող գնման առարկաների մասով հաստատված գնումների պլանը, դրա տեղեկագրում (procurement.am) հրապարակված լինելը հավաստող՝ կայքից արտատպված փաստաթուղթը:

Խնդրում եմ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին կետի 6-րդ ենթակետի ա) մասով նախատեսված հիմքերի առկայության դեպքում հաշվառել տեղեկատվությունը՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/86» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Արքասիմ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Արքասիմ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.07.2020թ.-ի գրությամբ դիմել է «Արքասիմ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10369-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով հրավիրված նիստերին նաև ներկայացրել է գրավոր դիրքորոշում, հայտնելով հետևյալը.

«Ձեր վարույթում է գտնվում 2020 թվականի հունիսի 15-ին գնանշման հարցման ընթացակարգով ՀՀԿԳՄՄՆԳՀԱՇՁԲ-20/86 ծածկագրով կազմակերպված կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների գնման գործընթացի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժիններին «Արքա Սիմե» ՍՊԸ մասնակցության հետ կապված ընկերությանը

գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող անձանց ցուցակում ընդգրկելու վերաբերյալ գրությունը:

Հայտնում եմ Ձեզ, որ ընկերությանն այդ ցուցակում ընդգրկելու վերաբերյալ ներկայացված հիմքերը բավարար չեն, քանի որ, մեր կողմից գնման ընթացակարգում մասնակցելիս ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթեր, սակայն ստորագրություններն ու ծավալաթերթերում շտկումներ արվելու վերաբերյալ մեզ տրվել է ժամանակ, որի ընթացքում ընկերության կողմից ուղղվել են ստորագրությունները, իսկ ծավալաթերթ-նախահաշիվը ուղղվել և ներկայացվել է միայն 3-րդ չափաբաժնի համար, քանի որ 1-ին և 2-րդ չափաբաժիննիրով ընկերության գնառաջարկը հետագա բանակցություններին մասնակցելու համար բավարար չէին: Ընկերության կողմից որևէ միտում չի եղել գնման գործընթացին խոչընդոտելու և/կամ ստանձնած պարտավորություն չկատարելու վերաբերյալ: Բացի այդ, գտնում ենք, որ ընկերության կողմից չեն խախտվել ՀՀ գնումների մասին օրենքի 6-րդ հոդվածի 1 մասի 6-րդ կետի ա ենթակետի պահանջները, քանի որ վերջինս արձագանքել է թերությունները շտկելու վերաբերյալ պատվիրատուի պահանջին և ներկայացրել է համապատասխան փաստաթղթեր, սակայն, ինչպես արդեն նշվեց չի ներկայացվել 1-ին և 2-րդ չափաբաժինների համար ծավալաթերթ-նախահաշիվները լրացված տեսքով:

Միաժամանակ նշեմ, որ Պատվիրատուի կողմից կազմակերպված ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/86 ծածկագրով ընթացակարգը կազմակերպվել է առանց իրավական հիմքի, որի արդյունքում խախտվել է Գնումների մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասով, ՀՀ ԿԱ 04.05.2017թ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 16 և 17 կետերով սահմանված պահանջները:

Գտնում ենք, որ ոչ իրավաչափ կազմակերպված ընթացակարգի արդյունքում ստաջացացած բացասական հետևանքները չեն կարող մեկնաբանվել ի վնաս ընկերության, ուստի, խնդրում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 10.07.2020թ. թիվ 26/26-1/10369-2020 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:»:

4. <u>ՍՑ-LO-2020/169 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.06.2020թ.-ին հայտարարվել է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «Արքասիմ» ՍՊԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/86» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 25.06.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին, մասնավորապես՝ ներկայացված ծավալաթերթ-նախահաշիվները եղել են անընթեռնելի և թերի լրացված, ինչպես նաև հաստատված չեն եղել էլեկտրոնային ստորագրությամբ, իսկ հավելված 1-ում և հավելված 2-ում էլեկտրոնային ստորագրությունը տեսանելի չի եղել:

v. Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. 29.06.2020թ.-ին Հանձնաժողովն արձանագրել է, որ «Արքասիմ» ՍՊԸ-ն մասնակի է շտկել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ շտկվել է միայն 3-րդ չափաբաժնի մասով:

vii. 01.07.2020թ.-ին Հանձնաժողովը որոշել է գնահատել անբավարար և մերժել Մասնակցի հայտը 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

viii. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 07.07.2020թ.-ի թիվ 04.1/31.2/17178-20 գրությամբ:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10369-2020 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ (10.10.2019թ.-ի թիվ 1422-Ն փոփոխություններով) հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Սույն գործում առկա փաստերի համաձայն՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունի կողմից կրթական օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով 04.06.2020թ.-ին հայտարարված «ՀՀԿԳՄՍՆԳՀԱՇՁԲ-20/86» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով հայտ ներկայացրած «Արքասիմ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանել հրավերով սահմանված պահանջներին և Հանձնաժողովը, ղեկավարվելով Կարգի 41-րդ կետի դրույթներով, որոշել է կասեցնել գնման գործընթացը և առաջարկել Մասնակցին մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

29.06.2020թ.-ին Հանձնաժողովն արձանագրել է, որ որ «Արքասիմ» ՍՊԸ-ն մասնակի է շտկել արձանագրված անհամապատասխանությունները, մասնավորապես՝ շտկվել է միայն 3-րդ չափաբաժնի մասով:

01.07.2020թ.-ին Հանձնաժողովը որոշել է Մասնակցի հայտը՝ 1-ին և 2-րդ չափաբաժինների մասով գնահատել անբավարար և մերժել՝ հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով:

Վերոգրյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հաստատված է համարում, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ են եկել 29.06.2020թ.-ին՝ Մասնակցի հայտի հրավերի պայմաններին չհամապատասխանելու հիմքով, սակայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը Մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել 07.07.2020թ.-ի թիվ 04.1/31.2/17178-20 գրությամբ՝ Կարգի 45-րդ կետով սահմանված 5 աշխատանքային օրյա ժամկետի խախտմամբ:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից:

Ամբողջացնելով վերը թվարկված իրավական նորմերը, դրանց և գործում առկա փաստերի համադրման արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, լիազորված մարմնին ուղարկելը Պատվիրատուի պարտականությունն է, այն իմպերատիվ (պարտադիր) դրույթ է, որի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել իրավահարաբերության առաջացումը:

Հակառակ դեպքում Կարգի 45-րդ կետով սահմանված դրույթները չեն ծառայի իրենց նպատակին, այլակերպ մեկնաբանման դեպքում կհանգեցնեն որևէ ողջամիտ իրավական փաստարկով չհիմնավորվող մեկնաբանության՝ հաշվի չառնելով այն ընդունող մարմնի

նպատակը, նորմում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունը:

ՀՀ վճռաբեկ դատարանն իր նախկինում կայացված որոշումներից մեկով կարևորել է, որ Հայաստանի Հանրապետության՝ որպես իրավական պետության կարևորագույն հատկանիշ է այն, որ սահմանադրական մակարդակով պետությունը հավաստում է իր հավատարմությունն այդ տեսությանը, ճանաչում և ամրագրում է իր կախվածությունն իրավունքից, իրավունքի գերակայությունը՝ պետական իշխանության նկատմամբ: Իրավական պետության և իրավունքի գերակայության սկզբունքը, ի թիվս այլոց, դրսևորվում է նրանում, որ Հայաստանի Հանրապետությունը որդեգրել է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների՝ որպես անմիջականորեն գործող իրավունք լինելու գաղափարը: Այն իր արտացոլումն է գտել նաև 2015 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության 5-րդ (Իրավական նորմերի աստիճանակարգությունը) և 6-րդ (Օրինականության սկզբունքը) հոդվածներում՝ մասնավորապես ամրագրելով, որ Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և որ **պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով** *(տե՛ս, «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՍՊԸ-ն ընդդեմ Էդիկ Հակոբյանի թիվ ԼԴ/0509/02/13 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 12.07.2018 թվականի որոշումը):*

Ընդ որում, պետաիշխանական լիազորություններով օժտված ցանկացած մարմնին, իր գործառնական կարգավիճակին համապատասխան, օրենքով և նորմատիվ իրավական ակտերով կարող են վերապահվել ինչպես պարտադիր, այնպես էլ հայեցողական լիազորություններ՝ պայմանավորված սահմանադրաիրավական այն հիմնադրույթի իրացման անհրաժեշտությամբ, ըստ որի՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով, չպետք է հակասեն և պետք է համապատասխանեն Սահմանադրությանը, օրենքներին կամ նորմատիվ իրավական ակտերին:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ Պատվիրատուի կողմից չի պահպանվել Կարգի 45-րդ կետի դրույթներով սահմանված իմպերատիվ (պարտադիր) դրույթները, քանի որ, ինչպես վերը

նշվեց, Կարգի 45-րդ կետի պահպանմամբ է միայն հնարավոր փաստել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու իրավահարաբերության առկայությունը և դրանից հետո նոր միայն ըստ էության անդրադառնալ Պատվիրատուի կողմից ներկայացված Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված համապատասխան հիմքերի օրինաչափությանը: Այլ կերպ ասած՝ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու Ընթացակարգի քննությունը, Կարգի 45-րդ կետով սահմանված ժամկետների խախտման արդյունքում, սահմանափակվում է ընթացակարգային նորմերի կիրառմամբ:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 10.07.2020թ.-ի թիվ 26/26-1/10369-2020 գրությամբ «Արքասիմ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/169 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**